

Տարածքային տնտեսությունը կարելի է դիտարկել որպես տարածքային ռեսուրսների, տարածքային արտադրության, տարածքային սպառման, տարածքային ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործման եւ այդ գործընթացների կառավարման համակարգ: Տարածքային տնտեսության կառավարման առանցքային նպատակը տվյալ տարածքի բնակչության կյանքի որակի բարձրացումն է, որն իր հերթին կարելի է ներկայացնել տնտեսական, սոցիալական, բնապահպանական եւ այլ բնույթի ցուցանիշների ամբողջությամբ: Բնակչության կյանքի որակի բարձրացման քաղաքականության կարելի է գործիքներից մեկը, որը հանդես է գալիս նաեւ որպես քաղաքականության միջանկյալ նպատակ, տարածքային տնտեսության մրցունակության ապահովումն է: Տվյալ պարագայում տարածքային տնտեսության մրցունակությունն ասելով հասկացվում է բնական, տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ այլ գործոններով պայմանավորված տարածքային տնտեսության դիրքը երկրի տնտեսական համակարգում, ինչպես նաեւ տվյալ տարածքում գործող առանձին ապրանքարտադրողների՝ ներքին եւ արտաքին շուկաներում մրցակիցներին հաղթելու ունակությունը, որը թույլ է տալիս մյուս տարածքային տնտեսությունների համեմատ ապահովել սոցիալ-տնտեսական զարգացման առաջանցիկ տեմպեր:

Գոյություն ունեն տարածքային տնտեսությունների մրցունակության ապահովման տարբեր հայեցակարգեր, որոնց շարքում տեսական եւ գործնական հիմնավորվածության ու կիրառելիության տեսանկյունից առանձնանում են հետևյալ երեքը՝.

- ✓ կլաստերային մոտեցման կիրառում,
- ✓ տարածքային տնտեսության ինովացիոն համակարգի զարգացում,
- ✓ տարածքային տնտեսության մրցունակության ձեւավորման ներուժային գործոնների օգտագործում:

Միջազգային փորձը վկայում է, որ կլաստերային մոտեցումը ողջ աշխարհում ընդունված է որպես տարածքային տնտեսությունների մրցունակության բարձրացման արդյունավետ քաղաքականության հիմք: Կլաստերների ձեւավորման եւ գործարկման հաջողված օրինակներ կան ԱՄՆ-ում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Փրանսիայում եւ մի շարք այլ երկրներում:

Կլաստերային մոտեցման ձեւավորման պատմական հիմք են, մի կողմից, Ա. Մարշալի «արդյունաբերական շրջան» եւ «ազլոմերացիաների տնտեսություն» գաղափար-

ները, մյուս կողմից՝ Յո. Շումպետերի ինովացիաները, որոնք դիտարկվում էին որպես տարածքային ազլոմերացիաների ներսում տնտեսական աճին նպաստող առանցքային գործոններ: Այսպիսով՝ Մարշալի եւ Շումպետերի տեսությունների հիմնադրույթների համակցման արդյունքում ի հայտ է գալիս կլաստերի շրջանակներում ֆիրմաների գործունեության համակցման գաղափարը, որը ենթադրում է, մի կողմից, կապակցված ֆիրմաների մոտ հարեւանության հաշվին ծախսերի նվազեցում եւ, մյուս կողմից, ինովացիաների տարածում մեկ ֆիրմայից մյուսը, որն ապահովում է կլաստերի ներսում արտադրողականության անընդհատ աճ:

Կլաստերային հայեցակարգի նկատմամբ ներկա հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է Մայքլ Պորտերի աշխատանքներով: Նրա բնորոշմամբ՝ կլաստերն իրենից ներկայացնում է փոփոխապված, աշխարհագրական տեսանկյունից հարեւան ընկերությունների եւ նրանց հետ կապված կազմակերպությունների այնպիսի խումբ, որի մասնակիցները գործում են որոշակի ոլորտում եւ բնութագրվում են գործունեության ընդհանրությամբ ու փոխադարձ լրացնողականությամբ: Պորտերի մոտեցմամբ՝ երկրի տնտեսական զարգացման գործում կլաստերների առանձնակի կարեւորությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Կլաստերները ազգային եւ տարածքային տնտեսության տնտեսական կառուցվածքում հանդես են գալիս որպես զարգացման շարժիչներ: Ըստ այդմ՝ տարածքի զարգացումը կախված է տարածքային տնտեսության մեջ կլաստերների առկայությամբ եւ նրանց մրցակցային դիրքով:
- Կլաստերները ազգային եւ տարածքային տնտեսությունների մրցակցային առավելությունների վրա ազդող մակրոտնտեսական գործոնների հետ առավել արդյունավետ համակցություն ապահովող կառուցվածքներ են, որոնք կարող են մեծապես պայմանավորել ինչպես ազգային, այնպես էլ տարածքային տնտեսության մակարդակում բիզնեսի վարման հիմնարար խնդիրները:
- Տնտեսության կազմակերպման համակարգի զարգացման մոտեցումների իմաստավորման համատեքստում կլաստերները հանդես են գալիս որպես տնտեսական նոր մտակաղապարի ձեւավորմանը նպաստող գործոն: Այն հնարավորություն է տալիս վերանայել մասնավոր հատվածի, կառավարության, առևտրային կազմակերպությունների, գիտակրթական եւ հետազոտական հաստատությունների դերը տնտեսության զարգացման գործում, ինչպես

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՃՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ատենախոսության թեմա՝
Տարածքային տնտեսության զարգացման եւ կառավարման համակարգի կատարելագործման ուղղությունները
 (ՀՀ Տավուշի մարզի օրինակով)
 Գիտական ղեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
 Տնտեսագիտության դոկտոր,
 պրոֆեսոր

Աշոտ ՂՈՒԼԱՐՅԱՆ
 ՀՊՏՀ
 կառավարման ամբիոնի
 սասպիրանտ

նաեւ սահմանել սեփականության բոլոր ձեւերի ընկերությունների ոչ միայն ընդհանուր հիմնահարցերը, այլեւ ընդհանուր հարավորությունները:

Մ. Պորտերի տեսության կարելուր նշանակությունը պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ տարածքային տնտեսությունների զարգացման ըմբռնումներում շեշտադրումը հետազոտվող օբյեկտի տեղակայման վայրի «համեմատական առավելության» սկզբունքից տեղափոխվեց «մրցակցային առավելությունների» հարթություն: Գլոբալացման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պայմաններում ինչպես ֆիրմաները, այնպես էլ բնակչությունը ավելի ազատ են դառնում իրենց տեղակայման եւ բնակության վայրի ընտրության հարցերում: Այդ իսկ պատճառով նվազում է տեղակայման այս կամ այն վայրին բնորոշ գործոնների (ինչպես բնական ռեսուրսները, աշխարհագրական դիրքը եւ այլն) դերը, եւ համապատասխանաբար՝ մեծանում է այն գործոնների նշանակությունը, որոնք կարող են ստեղծվել տվյալ տարածքում:

Այսպիսով՝ կլաստերը կարելի է դիտարկել որպես կառավարման տարբեր կառուցվածքներ, բիզնեսի վարման տարբեր մշակույթներ, զարգացման ռազմավարական տարբեր ուղենիշեր ունեցող ընկերությունների եւ կազմակերպությունների տարածքային միավորում, որը ստեղծվում է շուկայական տնտեսության պայմաններում տարածքային տնտեսության կայուն զարգացման, ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրների լուծման նպատակով:

Տարածքային տնտեսություններում կլաստերների ձեւավորման ու զարգացման գործում կարելուր դեր ունի պետությունը: Չարգացած տնտեսությամբ երկրներում կլաստերային մոտեցման կիրառմամբ տարածքային զարգացման քաղաքականությունը կառուցվում է հետեւյալ կետերի շուրջ՝.

✓ կլաստերների պետական աջակցության հիմնական մեխանիզմի ընտրությունը (կլաստերի գործարկման պայմանների ստեղծում կամ անմիջական աջակցության ցուցաբերում),

✓ պետական միջոցների ստացմանը հավակնող կլաստերների շրջանակի ընտրությունը (հնարավոր է ինչպես տարածքային կլաստերների լայն շրջանակի, այնպես էլ սահմանափակ թվով առաջատար կլաստերների ընտրությունը),

✓ կլաստերների աջակցության հիմնական նպատակի հստակեցումը (աշխատատեղերի ստեղծում, նոր տեխնոլոգիաների մշակում եւ այլն):

Եվրամիության երկրներում կլաստերների աջակցության ծրագրերը զարգանում են տարածքային, գիտության եւ տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաեւ արդյունաբերական քաղաքականությունների շրջանակներում: Այսպիսի ծրագրերի զարգացման միտումը ցույց է տալիս, որ կլաստերները ԵՄ-ում տարածքային, գիտական եւ արդյունաբերական զարգացման հիմնական գերակայություններից են: Այստեղ տարածքային կլաստերային նախաձեռնությունները հիմնականում կենտրոնացած են արդյունաբերական վերակառուցման, ինչպես նաեւ զարգացման կենտրոններից հեռու գտնվող եւ ճգնաժամ ապրող տարածքներում⁵: Ըստ որում՝ կլաստերների ստեղծման նախաձեռնությունների մոտ 1/3-ի հեղինակը պետությունն է, (ընդ որում՝ պետությունը ֆինանսավորում է կլաստերային նախաձեռնությունների 54%-ը), 27%-ը՝ գործարար հանրույթը (ֆինանսավորման 18%-ը), իսկ 35% դեպքերում կլաստերները ստեղծվում են պետության եւ բիզնեսի համատեղ նախաձեռնության արդյունքում (ֆինանսավորման 25%-ը)⁶:

Հատկանշական է, որ տարածքային տնտեսություններում կլաստերներին աջակցության ծրագրերը, առավելու-

թյունների հետ մեկտեղ, պարունակում են նաեւ նշանակալի ռիսկեր, որոնք պետք է անպայմանորեն հաշվի առնվեն նմանատիպ ծրագրերի մշակման եւ իրագործման ընթացքում: Այսպես, կլաստերային մոտեցմամբ՝ տարածքային տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող է բերել տարածքային տնտեսությունների անբավարար դիվերսիֆիկացման, այս կամ այն հատվածներում արվող երկարաժամկետ ներդրումները կարող են հանգեցնել գերակայությունների փոփոխման անհնարինության խնդրին, ինչպես նաեւ տարածքային տնտեսությունը ամբողջությամբ կարող է կախվածության մեջ հայտնվել կլաստերի «միջուկը» կազմող ընկերությունից:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ներկայում զարգացած, ինչպես նաեւ զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրների մեծ մասում կլաստերային մոտեցման կիրառումը տարածքային տնտեսության զարգացման քաղաքականության կարելուր ուղղություններից մեկն է: Այս համատեքստում ՀՀ-ում տարածքային տնտեսությունների մրցունակության բարձրացում եւ ինովացիոն բաղկացուցիչ ակտիվ կիրառում նախատեսող՝ զարգացման պետական արդյունավետ քաղաքականության մշակման ու կենսագործման համար կարելուր նշանակություն ունեն կլաստերային մոտեցման հիման վրա տարածքային տնտեսությունների զարգացման քաղաքականության իրականացման միջազգային փորձի վերլուծությունը եւ արդյունքների տեղայնացումը:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ տարածքային տնտեսությունների զարգացման գործում կլաստերային մոտեցման կիրառումը պետական կառավարման մարմիններից պահանջում է տնտեսական քաղաքականության մեջ էական փոփոխությունների իրականացում: Ըստ այդմ՝ առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել պետական քաղաքականության այն ուղղությունները, որոնց նպատակն է խթանել տարածքային տնտեսությունների շրջանակներում կլաստերների ձեւավորումը եւ զարգացումը: Որպես այդպիսի ուղղություններ կարելի է նշել.

● Շուկաների, մրցակցության, տարածքային տնտեսությունների զարգացումն ապահովող հիմնական եւ օժանդակ ճյուղերի զարգացման համալիր միջոցառումների իրագործումը. այս ուղղությունը պայմանավորում է տնտեսության մեջ գործունեություն ծավալող ընկերությունների շուկայական եւ մրցակցային ռազմավարությունների բնույթը, տնտեսավարող սուբյեկտների վերաբերմունքը մրցակցության, շուկայական ինստիտուտների, տարածքային տնտեսություններում մրցակցության, մշակութային եւ պատմական տարածքային գործոնների նկատմամբ, որոնք էականապես ազդում են ընկերությունների միջեւ հարաբերությունների, ինչպես նաեւ կառավարության ու սեփական աշխատակիցների հետ հարաբերությունների ձեւավորման վրա:

● Անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը. պետական քաղաքականության այս ուղղությունը պայմանավորում է կլաստերի արտաքին մակերեսային ձեւավորման բնույթը:

● Մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական արդյունավետ պլանավորման ապահովումը. ռազմավարական արդյունավետ կառավարումը կախված է ռազմավարական պլանավորման որակից, տարածքային տնտեսությունների զարգացման քաղաքականության հիմնական շահառուների (պետական եւ տեղական իշխանության, գործարար հանրույթի, բնակչության, հասարակական կազմակերպությունների եւ այլն) մոտեցումների, նպատակների համակցման աստիճանից: Ըստ այդմ՝ տարածքային տնտեսությունների կլաստերային զարգացումը կարող է կենսագործվել միայն տարածքային սոցիալ-տնտեսական միասնական ռազմավարության մշակման եւ իրականացման արդյունքում:

● Տարածքային տնտեսության մեջ ներդրումային նպաստավոր միջավայրի ձևավորումը:

● Մարզի ինովացիոն ներուժի ընդլայնման աջակցությունը. այս ուղղությունը կարելի է որովհետև մարզի ինովացիոն ներուժը տարածքային տնտեսության մրցունակության ապահովման հիմնական գործոններից մեկն է: Բացի այդ, ինովացիոն ներուժը պայմանավորում է նաև տարածքային տնտեսության այս կամ այն ճյուղի գրավչությունը, քանի որ ձևավորում է աշխատանքի արտադրողականության ցուցանիշը: Պետք է նկատի ունենալ, որ հանրապետությունում ինովացիոն ենթակառուցվածքի թերզարգացման, գիտական մշակումների առեւտրայնացման ինստիտուտների բացակայության, գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման այլընտրանքային գործիքների և արդյունքների ոչ լիարժեք գործարկման պայմաններում ինովացիոն գործունեության հետագա զարգացումը ինչպես ազգային, այնպես էլ տարածքային տնտեսությունների մակարդակում առանց պետության գործուն մասնակցության անհնար է: Այս պարագայում պետական ինովացիոն քաղաքականության կարելի ուղղություններից մեկն էլ պետք է լինի գիտության և ձեռնարկատիրության շահերի հատման կետերում մասնագիտական ինովացիոն կենտրոնների ստեղծումը, քանի որ այդ կենտրոնները անհրաժեշտ պայման են բարձր արտադրողականությամբ օժտված ճյուղերի ներամամբ տնտեսական կլաստերների ձևավորման համար:

● Կլաստերների զարգացումը խթանող միջոցառումների համակարգի մշակումը և իրագործումը: Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը պետության ուղղակի միջամտությունը, պետության կողմից գործարար հանրույթին այս կամ այն կլաստերի ստեղծմանն ուղղված առաջարկների ներկայացումը անարդյունավետ են կամ էլ պարզապես՝ անհնար: Այդ իսկ պատճառով կլաստերների զարգացման խթանման քաղաքականությունը պետք է ներառի կլաստերների մասնակիցների տնտեսական շահագործման մեխանիզմներ, որոնցից են, օրինակ, վարկային երաշխիքների տրամադրումը, վարկի տոկոսի լրիվ կամ մասնակի սուբսիդավորումը, հարկային արտոնությունների սահմանումը և այլն:

● Մարզի բնակչության կյանքի որակի բարձրացումը, որը կարելի է նշանակություն ունի տարածքային սպառողական շուկաների զարգացման, աշխատանքային ռեսուրսների քանակական և որակական կազմի բարելավման համար:

Կլաստերների ձևավորման ու զարգացման նախապայմանների ստեղծմանն ուղղված պետական քաղաքականության նշված ուղղություններով արդյունավետ իրականացումը պահանջում է տարածքային տնտեսությունների պետական կառավարման արդյունավետության բարձրացման մի շարք կոնկրետ միջոցառումների իրականացում, որոնց թվում կարելի է նշել.

✓ տարածքային տնտեսությունների մակարդակում տնտեսական և սոցիալական ոլորտներում կառավարման համակարգերի կատարելագործում,

✓ տարածքային տնտեսությունների առանձին ճյուղերի, ինչպես նաև մարզերի սոցիալական ոլորտների զարգացման նպատակային-ծրագրային կառավարման համակարգի ամբողջական ներդրում և արդյունավետ գործարկում,

✓ տարածքային, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունքներին կողմնորոշված բյուջետավորման սկզբունքների համատարած կիրառման խթանում,

✓ տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոփոխարեքությունների կառուցման, վարչական կարգավորման և կառավարման նոր մեխանիզմների ներդրում,

✓ տարածքային զարգացման ինստիտուտների ստեղծում, որոնց գործառնությունների մեջ պետք է մտնի տարածքային տնտեսությունների զարգացման մոնիտորինգի և վերլուծության իրականացումը,

✓ գործարար հանրույթի և իշխանության մարմինների միջև փոխվստահության հարաբերությունների հաստատում՝ մասնավոր-պետական գործընկերության հիման վրա, տարածքային և տեղական մակարդակներում դրա մեխանիզմների զարգացում:

1. Наролина Т.С., *Формирование и развитие кластеров как механизм обеспечения конкурентноспособности экономики региона*, Автограф. дис. ... канд. экон. наук, Воронеж 2007, с. 4.

2. Капустина, Л.М., *К вопросу о понятии типологии региональных кластеров*, Л.М. Капустина, И.Г. Меньшенина, Голицовские чтения: сб. науч. тр. 2008, #3, с. 44.

3. Портер М., *Конкуренция*, Пер. с англ., М.: Издательский дом "Вильямс", 2005, 608 с.

4. OECD, *Competitive Regional Clusters: National Policy Approaches*, ISBN 978-92-64-02708-4, 2007 www.oecd.org/publications/Policybriefs

5. Նույլը
6. *The Cluster Initiative Greenbook: New Findings on the Process of Cluster-Based Economic Development*. <http://www.ivorytower.se/greenbook/general.html>